

1. Մեսրոպինը.

Ուզածս ամեն՝ զինւոյ տէկ մը, երգէ զիրք մը,
Պատառ մը հաց, և պէտքերս ապրելու չափ,
Եւ անապատն, ուր մենք նստինք պիտի քեզ հետ,
Կ'ըլլայ չքեզ պտորակներէն սուլթանական:

8. Միրզայեանինը.

Թէ՛ մեռք բերել ցորենի
Կարող լինիս երկու հաց,
Գինուց մէկ կամ երկու լիտր,
Եւ ոչխարի խորոված,
Մի կնոջ հետ զեզանի՝
Նստած մի տեղ աւերակ,
Հաճոյք է սա, որ լուսնի
Նա որ նոյն իսկ ունի թագ:

Ընթերցողը կը տեսնի, որ էապէս նոյնն են սրանք, բայց տարբեր նրբերանգներով, որոնց մէջն է սակայն գեղեցկի հրաշքը, և ինչքան հեռու է Միրզայեանինը վերեւի բոլոր չորսից, մասնաւորապէս «խորովածով»։ Բոլորովին անպատշաճ . . . կան և այնպիսի քառեակներ, մէկի կամ միւսի մօտ, որ բնաւ իրար նման չեն. հեռու իրարուց, կարծես ներշնչումներ են, մի տեսակ խայեամական մօտիւններ. (արդէն Ֆիցցերլդի թարգմանութիւններն այդ բնոյթն ունին, որ յաճախ իսկ գերազանցում են բնագրից)։

Սակայն և այնպէս, հայ թարգմանիչները յաջող հայացումներ ունին, մանաւանդ Պ. Միրզայեանը։

Գաղով յառաջաբան — ներածութիւններն՝ երկուսն էլ ունին առաւելութիւններ. Պ. Մեսրոպինը՝ մատենախօսական — պատմական գրութիւն է, իսկ Պ. Միրզայեանինը՝ մի հետաքրքրական վերլուծումն է Օմար խայեամի հոգեբանութեան։

Պ. Միրզայեանի՝ խայեամի գիվանին կցած Բաբա—թահէրի և Գաւազան բանաստեղծների մօտ 160 ստեղծագործութիւնների մէջ կան հրաշալի, փոքրիկ բանաստեղծութիւններ, ուր փայլում է պարսկական նուրբ ու սրամիտ ճաշակը։

Օրինակի համար.

Դու որ ինձ հետ, սիրուելիս,
Ընկեր լինել չես ուզում,
Ամեն գիշեր էլ ինչո՞ւ
Գալիս ես ինձ երազում:

Մեռնում եմ ես այս ցաւից,

Որ իմ մօտից զնայելի.

Կողքիս նստել չուզեցար.

Երբմիս վրայ զէ՛թ նստիլ:

Յանձնարարում ենք հայ ընթերցողներին ու շարունակելու համար անհուն գեղեցկութիւնը մեզ հարազատ արեւելքի բանաստեղծութեան։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



ԱՅԼԵՒԱՅԼԻՔ

ՄԵՐ ՊԱՏԱՄԱՆԸ :: :: ::

:: :: :: :: :: ԱՌ ՀՈՐՈՑ

« Բազմավէպ »-ի¹ և « Ժողովուրդի Զայնը »-ի² յարգելի ընթերցողները անշուշտ հետաքրքրութեամբ հետեւեցան զրական պայքարին, որ Հորոյի և իմ միջև տեղի ունեցաւ։

Յաւալի է որ Հորոյ չէ կրցած թափանցել դիտողութիւններու և սրբագրութիւններու խորը, ինչպէս նաև հայ ոսկիւ ղէն լեզուին և մեր Հարց դաւանանքին և վարդապետութեան։

Բայց մենք մեր օրինաւոր պատասխանը կու տանք, թողով հասարակութեան մեր գրածներէն դատել. Հորոյի ուղղամտութիւնը։

Երկայնարանութիւնն աւելորդ համարելով՝ միակ օրինակով մը բացատրելով պիտի ցուցնեմ Հորոյի « հայագիտութիւնը »։ Ոչ ամէն ինչ որ կը փայլի ոսկի է. Հորոյ ինքզինքը ոսկի կը ցուցնէր... պիտի տեսնենք որ իրականին մէջ արժէք չունի եղբր։

Ահա միակ օրինակը, փորձաքարը. « Ժող. Զայնը » Ապրիլ 3 թուին մէջ կը գրէ.

1. 1923 Դեկտ. և 1924 Յուլ. — փետր.

2. 1924 Փետր. — Մարտ — Ապրիլ — Մայիս.

«Ղուկ ԺԲ. 17. Ան ուրումն մեծատուն
 հառն անդք տոմարան, որ պիտի ըլլայ
 կամ ԵՏՈՒՆ ԱՆԻՍ ՏՈՂՄԱԿԱՆՍ. (առա-
 լելապէս առաջինը) ԱՆԻՔ ՏՈՂՄԱԿԱՆՔ
 ՏՈՒԱՆ»։ Ասոնք Հորոյի խօսքերն են.
 Թողունք յաջորդ սխալները. վերլուծենք
 քերականորէն և տրամաբանորէն իր բաժը.
 Նախ սրբագրութեանց մէջ կրկին սխալ
 կ'ընէ. երկու պարագային մէջ ալ ՏԱՄ
 բային ընտելեան խնդիրը սեռական կը
 թողու, մինչ պէտք էր տրական զնել, այ-
 սինքն ԱՌՆ ՌԻՄԵՄԵՆ ետուն անոյ տոմար-
 ան, և կամ ԱՌՆ ՌԻՄԵՄԵՆ ունիք տոմ-
 արական տուն. և ոչ թէ ԱՌՆ ՌԻՄԻՄԵՆ.
 Այս մէկ՝ կամ լաւ ևս երկու սխալ. Հորոյ
 որ ֆրանսերէն գիտէ անուշտ պիտի չըսէր՝
 On donna de telle personne un
 champ այլ On donna à telle per-
 sonne etc. (որ)։ Յետոյ խեղճ ծերունին
 չէ հասկցած ՏՈՂՄԱԿԱՆ բառին նշանա-
 կութիւնը, ո՞վ գիտէ ցիգային (!), ազգային
 (!) միտքը զրիւր է։ Յամենայն դէպս իբր
 ածական նկատեր է և հետեալաբար ուզեր է
 Անդք գոյականին հետ համաձայնեցնել.
 աւանդ, չէ նշմարած որ ՏՈՂՄԱԿԱՆ գոյական
 մ'է և ոչ ածական և կը նշանակէ առատ
 աղբիւրք, բերք։

Հապա նախադասութեան իմաստը...
 տրամաբանական լուծումը...։ Յաւալի է
 որ Հորոյ այդ պարզ նախադասութիւնը
 չէ կրցած հասկնալ։ Ահա անոր կարգը,
 լուծումը, իմաստը։

Անդք = Տէր բայի եզր, ուղղ.

Էտուն = Ներգործական բայ.

Տոմարական = Սեռի խնդիր հայց, հոլ.
 (ետուն ներգործ. բային)։ Ան ուրումն մե-
 ծատն = Սեռ. յատկացուցիչ ԱՆԻՔ ին
 թէ որո՞ն կը վերաբերի. անդքն ալ բնա-
 կանաբար յատկացեալ է։ Որով իմաստն
 է պարզ ու մեկին. ՀԱՐՈՒՍ ՄԱՐԻՈՒ ՄԸ
 ԱՐՏԵՐԸ ԱՌԱՍ ԱՐԻԻՆԷՔ, ԲԵՐԷ ՏՈՒՆ։

Որուն ահա յունարէնը.

Ανδρώπος τινος πλουσιου εὐφρόρησεν ᾧ
 χῶρα.

Եւ լատիներէնը

Hominis cuiusdam divitis uberes
 fructus ager dedit.

Եւ որովհետեւ Պ. Հորոյ յունարէն և
 լատիներէն լեզուները չի գիտեր, գաղղիւ-
 բէնն ալ կը զնեմ որ ապահով ըլլայ.

Il y avait un homme riche dont
 le champ rapportait beaucoup de
 fruits.

Այս կարգին և ասոր նման երկայն
 շարք մը կրնայինք ներկայացնել ընթեր-
 ցողաց, բայց մէկն ալ կը բաւէ մեր նպա-
 տակին։ Ընթերցողը կրնան անկէ ֆնացածը
 դատել. Ab uno disce omnes.

Ուրեմն թող ընթերցողները գիտնան, որ
 ածականը գոյականէն զանազանել չկրցող,
 սեռականն ու տրականը չգիթող, անուն
 բային և խնդիրները չհասկցող հայերա-
 նագէտ Հորոն է որ յաւակնութիւնն ունի
 II. Գիրքն, ԵՂԻՇԷՆ և Նախնիք սրբագրելու.
 հետեալաբար ըրած սրբագրութիւններն ուրիշ
 բան չեն՝ բայց եթէ աղաւաղումն իմաստի
 և լեզուի։

Հորոյ իր յօդուածին սկիզբը իմ մա-
 սիս բաժնէր ԱՆՆԱԻԱՆՁԵԼԻ ՀԵՂԻՆԱԿՈՒ-
 ԹԻՒՆ՝. փոյթ չէ. չէ՞ որ կարևորագոյնը
 անհրաժեշտ սրբագրութեանց ու դիտողու-
 թեանց ճշդութիւնն է, որու ցաւէն Հորոյ
 բորբոսած գործողածքով կ'արտայայտուի։

Այն նախանձիւի հեղինակութիւն մը
 չեմ, սակայն նախաճիւղի հեղինակներ ինծի
 ուրախակցութիւններ գրեցին՝ Հորոյի տգի-
 տութիւնն երևան հանելու համար։

Հորոյ եթէ իր քննադատութիւնները
 համեստութեամբ ըրած ըլլատ, իրեն վրայ
 իրոյ չիղչեր այդ անպատիւ վկայութիւն-
 ները, որոնք իրեն շացասական կողմերը
 միայն կը ցուցադրեն գրական ո՛ր և է ար-
 ժէք չունենալուն համար։

Կը թողում Հորոյի որ կրկին անդա-
 դանայ իր ըրած սխալները, ուրախ եմ
 որ զգացեր է և կը ջանայ ուղղել. երանի
 թէ այդ առաքինութիւնը բոլոր դիտողու-
 թեանցս նկատմամբ ունենար։

Ներկայ գրութեանս մէջ կը ստիպուիմ
 Հորոյի չհասկցածներուն ընդարձակ լու-

1. «Փողովորդի մայր» Փետր. 29.

սարանութիւններ տալ, որպէս զի իրեն գրածներուն անտեղութիւնն հասկնայ:

Ա. — ՄԱԿԱՐԱՅԵՑԻՈՑ Ա. ԵՒ Բ. ԳՐՈՑ ՎԱՆԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

« Զրով կիզու » խնդրոյն մասին վկայութիւն բերեր էի Բ. Մակ. Գրքէն օրինակ մը. բայց Հորոյ զայն մերժելու համար, համարադարձիւն ատենելով իմ խօսքերէս՝ որ մեծն թէոդոսի վրայ պատմութիւնները ըստ Յայամաւորքին՝ առասպելախառն համարած էի, իրաւունք կ'առնէ a pari Բ. Մակ. Գրքին հրաշալի դէպքը առասպելախառն անուանել: Ահա իր խօսքերը. « Երբ մեր յարգելի գրադատը եկեղեցական ըլլալովն հանդերձ Մեծին թէոդոսի համար Յայամաւորքին մէջ գրութիւնները մասամբ առասպելախառն կը համարի, ես ինչո՞ւ չպիտի համարձակիմ նոյն ածականը գործածել ներկայ պարագային »¹:

Հորոյի այս ձեռնարկը անտրամաբան է, վասն զի Մակ. Գիրքը կարելի չէ համաձայնել որ և իցէ առանձնականի մը գրութեան, զոր եկեղեցին վաւերացուցած չէ. ինչպէս քիչ յետոյ ինքն ևս Հորոյ կ'անդրադառնայ իր գործած սխալը և կը խոստովանէ իր 19 Ապրիլին. « Իսկապէս հինգ գրքերէ կը բաղկանայ Մակարայեցեաց պատմութիւնը որոնցմէ Արեւմտեան և Արեւելեան հին եկեղեցիք միայն առային երկուքը վաւերական համարած են »²:

Արդ ճիշդ իմ ըսածս ալ այս էր. ես ալ այդ Արեւելեան և Արեւմտեան եկեղեցւոյ հեղինակութեան վրայ յեցած Մակ. (Ա և) Բ. գրքէն վկայութիւն բերեր էի:

Ըստ այս վկայութեան ինքն իսկ կը հերքէ Մարտ 21ին գրածը, որով ըսած էր « Զմոռնանք յիշել թէ քրիստոնէութեան մէկ մեծ հաստատմը այն է բարեկարգեալ եկեղեցին (քողոքականք) չընդունիր վաւերականութիւնը Մակարայեցեաց երեք գրքերուն և զուրս ձգած է Ս. Գրքէն »³:

Մակարայեցեաց Ա. և Բ. Գրքերը, ինչպէս ինքն ալ խոստովանեցաւ, ընդունած է Արեւելեան և Արեւմտեան եկեղեցին իրեն վաւերական Ս. Գիրք միւս երկրորդականներէն կարգին, (Դանիէլ, Եսթեր, ևն...): Ս. Հարց բազմութիւն մը ինծմէ շատ ու շատ դարեր առաջ զանազան վկայութիւններ մէջ կը բերեն իբրև ներշնչեալ՝ աստուածաշունչ գրքերէ՝:

Հայաստանեայց եկեղեցին ալ Ընդհ. եկեղեցւոյ և Յոյն և Լատին Ս. Հարց հետ ծայնակից էր, ընդունած ըլլալով Ս. Թարգմանչաց բերած հաստատուն՝ և զստոյգ օրինակս գրողը ուր կը բովանդակուէին Մակ. գրքերն ալ:

Եղիշէի պատմութեան մէջ շատ յայտնի և յատկ է մեր եկեղեցւոյ համաձայնութիւնն ալ, հաւատքն ալ այս մասին:

« Զի ինքն իսկ (վարդան մեծն) տեղեակ էր ի մանկութենէ իւրմէ Ս. Կրտսեանաց (ուսած անշուշտ յոստ իր պապուն Ս. Սահակի և ալ Սուրբ Հարց) Զոր և ի ձեռն առեալ զքաջ նկարագիրն Մակարայեցեաց ընթեռնոյր ի լսելիս ամենեցուն... որպէս մարտուցեալ կոռեցան ի վերայ աստուածատուր օրինացն ընդդէմ թագաւորին անտիրեացուց: (ուրեմն ամ.

1. Ժող. Զայմը Մարտ 25:

2. Անդ:

3. Անդ:

4. Կղմէն Աղեքսանդրացի † 217. Յաճախապատու (Stromatum):

Լիպսոդիոս † 235 Յգգս. Անթիքրիստ. 49. — Ի Դանիէլ 32:

Տերտուլիանոս † 240 Ընդդէմ Հրէից 4:

Ուրգենտ † 254 Յգգս. սկզբանք Բ. 1, 5:

Կիպրիանոս † 258 Վ. 4. 117. — Առ Փոքս. 11:

Աթանաս 296-373 Ի Հէ. Սաղմոսն:

Եփրեմ 320-370 Ի Դան. Կրք 8:

Եպիփան 310-403 Յգգս. Թուոց 3:

Հերոնիմոս 331-420 Յիսայի ԻԳ. 2:

Ոգոստինոս 354-430 Ընդդէմ Գաւտ. Բ. 98 ևն. ևն:

5. « (Իսկ Թարգմանչացն) յետ այնորիկ հաստատուն

օրինակց Աստուածատուր գրոցն... զային երեւելով աշխարհին Հայոց և առաջի գնէին հարցն զբերեալ կտաւ կարասն եկեղեցւոյ Սրբոյ »: — Կորին. Պատմ. Ս. Մեք. ապ. Վենետ. 1894. էջ 33:

6. Խորենացի. Պատմ. ապ. Վենետ. 1827, էջ 523:

բողջ հաստացեալ բանակն ալ զայն կ'ընհուենէր» 》:

Բայց Յայմասուրբի կամ Մեծին Թէոդոսի վարուց մասին խնդիրը շատ ու շատ տարբեր դիրքի մէջ է. անիկա *légende* մ'է վկայաբանական ոճով և Եկեղեցին անոր մասին ոչ մէկ արտայայտութիւն, ոչ մէկ վաւերացում տուած է, հետեաքար կը մնայ եկեղեցական պատմիչներու կամ վկայաբաններու ստուգել, քննել և զուտ պատմականը առասպելներէն մաքրել:

Որով ասոնց կամ այսպիսի երկի մը մասին առասպելախառն յորջորջումս կարծեմ շատ իրաւացի էր. մինչդեռ Հորոյի համար յորորովիւ կը պակսին փաստ և իրաւունք նոյնն ըսելու Մակ. Գրոց նկատմամբ:

Բ. — Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ Ե. ԴԱՐՈՒ ՀԱՐՑ ՔՈՎ՝ ԸՍՏ ՀՈՐՈՑԻ.

Ես Հորոյի բաժնէ Թէ մեր Հարք լըռութեամբ անցեր են¹, հարկ չըլլալով Ս. Երրորդութեան վրայ խօսիլ, և պնդած էի Թէ այս լըռութիւնը ամենեկին ուրացութիւն չէ. և հետեաքար և ոչ մեր կողմէն «անփառունակ նահանջ» մը, ըստ Հորոյի բացատրութեան:

Ըսի որ ամենեկին հարկ մը չի կար Ս. Երրորդութեան վարդապետութեան վրայ խօսիլ, ինչո՞ւ. Որովհետեւ մեր Ս. Հարք պատասխան պիտի տային մի միայն Միհրենբրսնի նամակին առարկութեանց:

Արդ Միհրենբրսնի նամակին մէջ Ս. Երրորդութեան վրայ ո՛ր է իցէ ակնարկուած իւր չի կայ:

Տեսնենք բովանդակութիւնը բնագրին մէջ. Զրուան կը ծնանի Որմիզդէն և Արհմնը². մին բարի³ միւսը չար⁴, որոնք կը սկսին ստեղծագործել, և աստի բարւոյ և

չարի երկարմատեան վարդապետութիւնը⁵, ինչ որ կատարելապէս նոյն է Մանիքէականութեան հետ. ասով Միհրենբրսնի նպատակ ունէր յորդորել Հայերը որ ընդունին այս երկու սկզբունքն և վարդապետութիւնը և դառնան Մազդեզանց կրօնքին, որ իբրեւ Թէ միակ ճշմարիտ կրօնքն էր:

Ուրեմն իմացար, Պ. Հորոյ, որ Ս. Երրորդութեան վրայ ակնարկութիւն չիկայ, Հետեաքար ուսկի՞ց կը հետեւցնես մեր Հարց ուրացութիւնը Ս. Երրորդութեան վարդապետութեան, ուրացութիւն այն ժաւանակ տեղի պիտի ունենար՝ երբ Միհրենբրսնի առարկած ըլլար և մեր Հարք խուսափէին պատասխանելէ:

Հիմա ա՛ռ ձեռքդ Արտաշատու մէջ գուժարուած մեր Ս. Հարց գրած պատասխանը և համեմատէ՛ Միհրենբրսնի նամակին հետ. տես Թէ յողուած առ յողուած կը պատասխանեն Թէ ոչ:

Արդ մեր Ս. Հարք նոյն ժողովին մէջ Պարսից քէշին հերքումը կը վարդապետեն, Թէ Յիսուսն է Արարիչ երկնի և երկրի⁶ և Թէ Աստուծոյ բոլոր արարածները բարի են և չար չի կայ անոնց մէջ⁷. Իսկ չարն առաջ կու գայ բանաւոր և հոգեկան արարածներու մէջ անձնիշխան կամքէն⁸. մինչդեռ պարսիկները ի հարկէ չարին առանձին և բարւոյն առանձին սկզբունքներ կը դնէին⁹:

Ուստի պայթարին էական կէտերը այս խնդիրներուն շուրջ էին. հետեաքար մեր Ս. Հարք բացարձակապէս չուզեցին ո՛ր և է ըրիստոնէական խորհուրդ պարզել Պարսից. և արդէն միւս կողմանէ հեթանոս լսելիքները չէին կրնար հանդուրժել:

Ուրեմն ասկից կը հետևի որ նպատակէ դուրս էր որ մեր Ս. Հարք ըրիստոնէական ո՛ր և է խորհուրդի վրայ խօսէին Միհրենբրսնի ուղղած պատասխանին մէջ:

1. «Քաղմավէպ», փետր. 1924.

2. Եղիշէ. ապ. Վնեան. 1898 էջ 44.

3. Անդ. էջ 45.

4. Անդ. 44.

5. Անդ. 45.

6. Անդ. 68, 58.

7. Անդ. 55.

8. Անդ. 55.

9. Անդ. 45.

Հորոյի վարկածին անտեղութիւնը կըր-
նայինք ցուցնել Նիկիական¹, Կ. Պոլսոյ
և Եփեսոսի² Ս. Ժողովներու վճիռներէն
և հանգանակներէն, զորս ընդունելու
լինդհանուր Եկեղեցւոյ հետ մեր Ս. Հարց
ալ, ինչպէս նաեւ անթիւ և անհամար
վկայութիւններէն³ որոնցմով լի են մեր
Ս. Հարց գրուածները և մասնաւորապէս
ժամակարգութիւնը: Հուսկ գրեթէ ամէն
աղօթից վերջ Ս. Երրորդութեան փառա-
սրութիւններէն որոնց ամենէն փառաւորն
և հանդիսաւորն է Ս. Լուսաւորչինը Նիկիա-
կան հանգանակին վրայ աւելցուած « Իսկ
մեր փառաւորեացուն որ յառաջ քան ըզ-
յաւիտեանս երկիր պազանելով Սրբոյ Եր-
րորդութեան և մի աստուածութեան հօր
և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ... »:

Իսկ ինչ որ Հորոյ կ'աւելցնէ այս մա-
սին թէ « Դարերէ ի վեր կ'երեւայ թէ
բանասիրաց, կամ գէթ կրօնական հար-
ցերով զբաղողներու ուշադրութեանէն վրի-
պած է գլխովին Միհրնեբանի նամա-
կին մէջ Պարսից կողմանէ քրիստոնէական
կրօնի հաւատալեաց դէմ մէջ բերուած
առարկութեանց և քննադատութեանց կար-
գին⁴ Երրորդութեան վարդապետութեան
մասին բնաւ անկարկութիւն չէ եղած, այլ
կ'ենթադրուի թէ Հայք զուտ Միաստուա-
ծեան են, հայր և որդի չկան⁵, ... » և
յետոյ « Ժողովուրդի ձայնը » ի մէջ⁶ « Արդ,
ես, անկախ կարծեաց տէր անձ, ոչ կղե-
րական, Եղիշէի ուսումնասիրութեան նուիր-
ուածն, երբ իմ խուզարկութեանցս մէջ
բանասիրաց և աստուածաբանից համար

ԴԱՐԵՐՈՎ ԱՆՆՇՄԱՐ ՄՆԱՅԱՄ(?) և ըլլայ ընդ-
հանուր եկեղեցական պատմութեան, ըլլայ
մեր Ե. դարու ազգային պատմութեան կամ
իմաստասիրութեան համար խիստ կարեւոր
և նորօրինակ երեւոյթի մը առջեւ կը զըտ-
նուիմ, մեղք գործեր եմ այդ գաղտնիքին
մէկ ծայրը վեր առնելով և գիտական
աշխարհին նկատողութեան և անկաշկանդ
դատողութեան ներկայացնելով զայն ... »

Մենք իրեն կը շնորհաւորենք այդ փառքը
որ 1400 տարիէ ի վեր ոչ ոք զտեսիւր
է որ այդպիսի անիմաստ անդրադարձութեան,
մտացածիւն և տեսնելի յսոն մ'ըսած ըլլոյ
մեր Ս. Հարց հետեւին:

Գ. — Ըսեմ էի թէ Հորոյ քարկոծեր է
գիւսգրատունին⁷, զինքն անուանելով « Հին
Աստուած »⁸ « Երկրն չբխւախ »⁹ են. են...

Հորոյ ուզեր է իր ինքի աստուած մը
բարձրանալ, աւանդ որ իր պատուանդանը
կը կազմէ կից մը չախլախ:

Դ. — Առ այն¹⁰ թէ Հորոյ « Կարեւոր
սխալներ »¹¹ չէ նշմարած, կը պատասխանէ
ինձ, թէ ՅԱՌԱՋԱՅԱԾ ՏԱՐԻԲԻ ՄԷՋ Է՞՞ և
թէ ՅՈՒՆԱՐԷՆ ԵՒ ԱՍՏԻՆԵՐԷՆ ԼԷՋՈՒՆԵ-
ՐԸ ԶԻ ԳԻՏԻՐ¹², ԵՒ ՊԷՏԲ ԵՂԱԾ ԲՈՎԱՆԴԱԿ
ՋԵՆԻԸՆՀԱՄՈԹԻՒՆԸ ԶՈՒՆԻ¹³: Հորոյի դա-
տապարտութիւնը իւր բերնէն կը լսենք ու
դիտ կը յաւակնի իւր երկն անուանել գրա-
դատութիւն¹⁴, և կը տեսնէ Եղիշէի մէջ « քե-
րութիւնը » և « աղճատմունք »¹⁵, բռնով թէ
« ամենեւն ճշտագ ուշադրութիւն գրաւած էին
ցարդ »¹⁶:

Մինչդեռ Միխիթրեան Հարց ունենալով
սկիտք եղած ձևերնաստութիւն, հմտութիւն

1. « Իսկ Թարգմանչացն... Բազում ընդհանգիր հարց
յետ այնք աւանդութեամբք, Նիկիական և Եփեսոսական
կանոնօք զայնի երեւելով աշխարհին Հայոց »: Կորին.
Պատմ. Ս. Միսրովպայ. Վնեստիկ. 1894. էջ 33:

2. Ս. Ժողովներու տօնախմբութեան առթիւ Հայաս-
տանեայց եկեղեցին այնքան զեղեցիկօրէն կ'իջրէ. « Եւ
զհաւատս հշմարիտս Ս. Երրորդութեան, ընդհանուր քա-
րօզեցին յեկեղեցիս ուղարկապառց հաւատալ ի Հայր և
Որդի և յԱմենասուրբ Տօղի ». (Խորենացի). Ժմկրդ.
տպ. Վնեստ. 1898. էջ 938:

3. « Եղիշէ և իւր ի. Դարու հայ Ուսումնասիրողք
և Քննադատք ». Կ. Պոլս. 1923. էջ 26:

4. Ապրիլ 19:

5. ԲաղմաՎէդ, Դեկտ. 1923, էջ 374:

6. Ժողի 2-այնը Մարտ 26:

7. Անդ:

8. Բազմ. Դեկտ. 1923, էջ 375:

9. Ժողի 2-այնը, Մարտ 1:

10. Անդ:

11. Անդ:

12. Երեք են իր ի. դարուն են... էջ 5:

13. Անդ:

14. Անդ:

յունարեն և յոտիկներէն լիզանկերոս, թո՛ղ ուրիշ հմուտ քանասէշներ, այնու հանդերձ պատկառութեամբ են տասն և հինգ դարու հեղինակութենէն:

Արդ մեր պաշտելի Հարց սրբազան և անզուգական երկերուն հասցէին ուղղած խօսքերովդ ուզելով ճիշդ պատասխանել, ո՛վ Հորոյ, կ'ըսեմ որ Եղիշէին մասին ցարդ ընէ գրածներդ ուրիշ բան չեն բայց եթէ բուն իսկ «Երեւոյթիւնք» և «աղձատմութիւնք»: Եւ դարձեալ, ո՛չ թէ մեր հոգիների մասեւնադասց արտագրութեանց, այլ բու Ազգասեան ախոռի եօթնասանամենի աղոտութիւններդ: Են, զորս թափելով համբերատար թուղթի վրայ՝ կ'ուրախանաս իրբեւ ընդ «Փոյրձ սրբագրութեան խաբարմանց քնադրին Եղիշէի»:

Ե. — Հորոյի շփոթութիւնը Փաւստոսի յառաջարկներն նկատմամբ յայտնի է: Նա իրեն «մասն հոռոտարտար»՝ պէտք չունէր իմանալու համար 1889 ի տպագրութեան գոյութիւնը՝ եթէ ուշ դրած ըլլար 1914 ի տպ. Յաւելուածին առաջին բառերուն «Չայս երկրորդ տպ. Փաւստոսի արարաք Յերկորորդի անտի»: Որով պիտի հետաքրքրուէր թէ ո՞րն է այդ Բ. տպագրութիւնը և պիտի գտնէր 1889 ինը: Եթէ այս կէտը Հորոյի «արթիւն» ուշադրութենէն չը վրիպէր, կրնար իրեն պատիւ բերել:

Զ. — Գրիգորիսի հնգետասանամեայ կաթողիկոս ձեռնադրութեան խնդրոյն վրայ աւելորդ կը համարիմ ծանրանալ, քանի որ թէ՛ մեր թէ՛ յոյն և թէ՛ Լատին եկեղեցական պատմութեան մէջ՝ միակ և առաջին ղէպըր չէ:

Հայաստանեայց եկեղեցւոյ մեծագոյն պարծանքները պատանի հասակին այդ բարձրութեանց ամբարձբը են. Գրիգոր վկայասէր՝ 15 տարեկանին քահանայ և

18 ին արդէն կաթողիկոս ամենայն Հայոց, ճնորհակալին՝ 17 տարեկանին և Լատրոնեացին՝ 16 ին քահանայ էին:

Է. — Եջնիկի «Եղիշ ԱՂԱՆՊՈՅ»Ը.

Եզնիկ իր գրքին սկիզբը կ'ըսէ, թէ մէկը ո՛ր է իցէ ճշմարտութեան վրայ խօսած ժամանակ «պարտի զմիտս յատակի և զխորհոյրս սրբի, զյոյս շարժմանց պարգի, զի յայն գոր առաջի եղ՝ հասանել կարասցէ»։ և դարձեալ թէ «պարտի զպղտորութիւն աշացն՝ զաղսն և զբիժն ի բաց պարգի զի մի մարտն որ զբոք շողայցեն (և ոչ լողայցեն) արգել հայելոյ ի յատակութիւն լուսոյն լիցին»։ Ուստի մենք ալ Հորոյի խորհուրդ կու տանք, երբ կ'ուզէ Եզնիկը ճշնապատել, պէտք է իրեն մտքի պղտորութիւնը, աղաղ, բիժը, մարտը, տգիտութիւնը են, ևն, զիտութեամբ սրբի, պարգի, մարքել. յոյն և Լատին լիզուները սորվիլ, և այնուհետեւ թերեւս «պէտք եղած բովանդակ ձեռնհասութիւնք» ունենայ, եթէ իր յառաջացեալ տարիքը ներէ, գուցէ իրեն համար ՄԱՐՍԵԼԻ և ԱՐԺԷՔԱԽՈՐ՝ զառնան անոր փաստերը:

Ը. — Եղիշէ ինչո՞ն չի յիշեր Ս. Լուսաւորչի անունը: Այս հարցման լուծուիւր կը խնդրէ ինձմէ Հորոյ. — Լուսեան պատմաճանիւն յայտնի են.

ա. — Եղիշէն մենագրութիւն մ'է, ոչ թէ ընդհանուր պատմութիւն:

բ. — Որովհետեւ Եկեղեցւոյ ղէմ պատեւտեալմ էր: Պարսիկները կը ստիպէին զՀայերը՝ զՔրիստոս ուրանալ ո՛չ գրիգոր Լուսաւորիչ. իսկ մեր Ս. Հարք ամէն միջոց ձեռք առին քաջալերելու զանոնք հաստատուն ձեալ Քրիստոսի հաւատքին մէջ, օրինակ բերելով թէ ինչպէս հին կտակարանի Նահապետներն ու մար.

1. Ժող. Զայցը, Մարտ 1.

2. Անդ Բ. մասն, էջ 41-70.

3. Ժող. Զայցը, Մարտ 2.

4. Փաւստ. Վնեւ. 1914, էջ 843.

5. Շնորհալի և Պարագայ իւր. Հ. Ղ. Աւելան Վե. Եւս. 1878, էջ 52-53.

6. Անդ էջ 58, 108.

7. Անդ էջ 507.

8. Եղիկ, տպ. Վնեւ. 1914 էջ. 7.

9. Անդ էջ 8.

10. Ժող. Զայցը, Մարտ 6.

գարէները քաջացան Գրիստոսի ապագայ հաստատով կռակաշտ թագաւորներու հաւածանքներուն մէջ, որչափ եւս առաւել դուրս որ միջոցներ էր և քրիստոնէայ կը կոչուի և իր շնորհները վայելած էր, անոր՝ որ ձեզի համար խաչուեցաւ ու մեռաւ, դուր ալ պէտք էր այնչափ աստուածային սիրոյն փոխարէն կեանք՝ կենաց, և արիւն՝ արեան փոխանակել ինչ որ ին իսկութիւնն և իր պահանջին անտեղութիւնն իմանալու համար Հորոյ թող դարձեալ կարդայ Դևոնդ երէցի ճառը՝:

Թ. — Մենք ԹԻՈՂՈՍ եւ եօթն ՄԱՆԿԱՆՔ ԵՓԵՍՈՍԻ:

Մեր տօնած և յիշատակած Թէոդոս Մեծն է ըսած էի և ոչ Փոքրը՝. բայց Հորոյ կրկին կը մերժէ, փաստ բերելով թէ՛ այն Թէոդոսն է Եփեսոսի եօթն մանկանց հետ տօնուողը՝ որուն օրով անոնք արթնցան. բայց այդ բանը տեղի ունեցաւ Փոքր Թէոդոսի ժամանակ ուրեմն... և ըսածը կը հաստատէ Միխիթարեան վարդապետի մը հեղինակութեամբ՝ (!):

Սակայն մենք կը հաստատենք մեր առաջին ըսածը. —

ա. — Ըստ եկեղեցական պատմութեան — Եթէ Եփեսոսի մանկանց յարութիւնը փոքր Թէոդոսի օրով եղած ըլլար, ժամանակակից եկեղեցական զոյգ անուանի պատմագիրներ, Սոլերատ և Սոգոմենոս պէտք էր յիշատակէին. արդ ըսողովին կը լռեն այդպիսի հրաշալի դէպք մը. ուրեմն...:

բ. — Աստուածաբանք: — Ընդհանուր եկեղեցական պատմիչներ կը յիշատակեն, թէ երբ աղանդաւորներ մարմնոց յարութիւնը կ'ուրանային՝ Աստուած այսպիսի հրաշք մը տնօրինեց որ այն ժամանակ փաստ մ'ըլլար հաւատացելոց ձեռքը իրենց հաւատքին ուղղափառութեան:

Բայց եկեղեցական պատմութենէն և նոյն ինքն Ս. Գրիգոր աստուածաբանէն գիտենք, որ մարմնոց յարութիւնն ուրացողները մեծին Թէոդոսի ժամանակ էին, մինչ Փոքրին ժամանակ այդ մոլորութեան հետք ալ չի կար. ուրեմն...:

գ. — Ըստ Վիսյաբանութեան — Մինչ կարգ մը հեղինակներ ըմբռնին թուականներով իրարու կը հակասեն այդ մանկանց նշման շուրջ, ընդհակառակն մեր ընտրեալագոյն Յայրմաւորները որոշ թուական մը կը դնեն, անոնց նշմամբ Գեղոսի հալածանաց օրով 249ին. նշման տեղը զուրկեն ալ 140 տարի. Արդ 249ին վրայ յաւելլով 140՝ կ'ուենանք 389 թուականը, որ է ճիշդ Մեծին Թէոդոսի օրերը, ուրեմն...:

Գալով առ այն թէ «Թէոդոսի» կ'ըսէ մեր պատարագամատոյցը, կը պատասխանենք. Մեր հին ձեռագիրներուն մէջ, ըլլալ Յայրմաւորք, ըլլալ Ճառքնտիր, ըլլալ պատարագամատոյց, Թէոդոս Փոքրի անունը չի կայ. այլ վերջին դարերու օրինակներուն մէջ Մեծին Թէոդոսին վերջ կ'աւելցուին Արկաղդոս և Թէոդոս Փոքրը, ասոնց ստոր ստորագրի, և ոչ իբրեւ անոնց տօն, այլ պարզապէս իբրեւ «Մենոց աստուածասէր թագաւորի, ՅՈՐՄԷ ԵՒ ԵՂԵՒ ՈՄԱՆԸ Ի ՅԵՏԻՆ ՕՐԻՆԱԿՍ ԻՆՉ ՏՕՆԱՅԻՆ ՅԻՅ ՅՈՐՄԱԿԻ «ԹԵՈՂՈՍԻՑ»:

Ասկէ կը հետեւի, որ ո՛չ ես այլ Հորոյ ինքն է որ 140 տարի քնացեր է և իր երազին մէջ և ոչ յարթութեան՝ գիտ այդ մանկանց պէս ի ցուն տեսեր է: Այժմ կրնամ Հորոյ դարձնել իր հեղեղութիւնը «Է՛» ուրեմն, ինչ կ'ըսէք ասոր, Հորոյ, ե՛ս սխալած եմ եղեր այս կէտին մէջ ալ՝ թէ դուրս...:

Ժ. — Հորոյ Ժան տ'Արքի մասին խօսած ատեն յայտնապէս պատմական խոշոր սխալ մը գործած էր ձերաբար նախատելով Հոռովը. գիտե՛ք կը զրկենք վերջերս

1. Եղիշ Ե. Յէդ. էջ 199 (տպ. Վենետ. 1893):

2. Բազմապէս, Յունուար 1924. էջ 23:

3. Ժող. Զայք, Մարտ 21:

4. Ժող. Զայք, Մարտ 25:

5. Լիպստայ Վաթք Սրբոց, Ագոս, հտ. Ա. էջ 134:

6. Ժող. Զայք, Մարտ 25:

հրատարակուած ընտիր վարքերուն որ այդ սխալն ուղղէ:

ԺԱ. — ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ .

Բարեբախտ կը համարիմ ինքզինքս որ ի. Դարու մէջ կ'ապրիմ եւ Հորոյ պատկերները չունի Հաւատարմութեան անդամ ըլլալու՝ զատապարտելու՝ զիս, որովհետեւ ճշմարտութիւնը խօսած եմ եւ իրեն սորվեցուցած եմ Մարդեղութեան խորհուրդին շուրջ³ Թէ ԲԱՆՆ ԱՍՏՈՒԱՆ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ², ԱՆՄԵԿՆԵԼԻ⁴ Ի ՀՕՐԷ, Ի ԾՈՅՈՅ⁵ ՀՕՐ, մարմին առաւ Ս. Կուսէն:

Իբրեւ Բան ՀՕՐ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ԵՂԱԻ ՄԵՇՏ Ի ՀՕՐԷ, բայց երբ «Բանն մարմին եղա» այն ատեն «քնակեաց ի մեզ»⁶, — Գանի որ Բան ՀՕՐ է՝ ՄԵՇՏ երկինքն է յաւիտեանից յաւիտեանս, որովհետեւ մի եւ անհուն բնութիւնն աստուածեղէն տեսա՞ւ մեզ⁷, տեղի⁸, սեկիտիսի⁹, եւ ամենուրեք¹⁰ է. բայց երբ Բանն մարմին պիտի առնէր՝ իշու յարգանդ Կուսին¹¹. այդ ԽՁՈՒՄԸ չ'արգիւրէր բնաւ որ Բանը ՄԵՇՏ անբաժանելի եւ անմեկնելի մնայ, քանի որ անբաժանելի է Ս. Երրորդութիւնը¹². ուստի ցնորական եւ մոլար ենթադրութիւն է զԲանն երկնքէն իջեցնել, թողլով Հայրն առանց Բանի, ունայն՝ անոր ծոցը, պապայ՝ Բանին աթոռը¹³:

Բայց որպէս զի մեր մտքին հասողութեան վերաբերենք այդ խորհուրդը, պիտի բացատրէինք. տես արեւը եւ իրեն ճառագայթը¹⁴ որ կ'իջնէ յերկիր, բայց անբաժանելի է արեւն, ինչպէս մեզի օրինակ կը բերեն միաբերան Ս. Հարը:

Մեր Ս. Հարց երկու անգուգական վեկայութիւններ կը բաւէին Հորոն եւ ամէն մոլորեալ՝ այս ինչորիս շուրջ՝ պապան՝ ձեցնելու եւ զատապարտելու. «Այսօր Բանն ի Հօրե անմեկնելի եւ անճանաչի խորհրդով, ի ձեռն կուսական որովայնի տնօրինարար ՅԵՐԿԻԻ ԵՐԵԻԵԱԼ¹⁵». եւ «Եւար Ի ԿՈՒՍԷ ԱՆՃԱՌ ՄԻՈՒԹԻԻՆ, ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ԵՒ ՄԵՇՏ ԳՈՂՈՎ, ՈՅ ՄԵԿՆԵՑԱՐ Ի ՀԱՅՐԱԿԱՆ ԾՈՅՈՅ¹⁶»:

Հորոյ հասարակութեան ներկայացաւ աստուածաբանի դիմակով, բայց անաւասիկ իր ձայնը զինքը շուտով մատնեց: Կը կնքենք հոս խօսքերնիս՝ յայտարարելով թէ՛ այս է Ս. Եկեղեցւոյ եւ նաեւ մեր Հայրց հաւատքը Մարդեղութեան շուրջ. եւ ինչպէս Ս. Երրորդութեան մասին ըսած ենք, նոյն եւ հոս կրկին կը յայտարարենք որ Հորոյ յայտնած գաղափարներն ու տուած բացատրութիւններն են ԶՈՒՏ ՀԵՐԵՏԻԿՈՍՈՒԹԻՆ ԵՒ ՀԱՅՀՈՅՈՒԹԻՆ:

Հ. ԵՂԱՌ ՓԵՃԻԿԵԱՆ

ՊՈՒՏԱԲԵՇԴԻ

ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Պատերազմէն առաջ Պոտարէշդի մէջ հազիւ 20-25 թրքահայ կը գտնուէր, եւ Պոտարէշդէ դուրս ամբողջ Հունգարիոյ մէջ հազիւ հայ կար: Պատերազմի միջոցին երեք ընտանիք հաստատուեցան. իսկ անկէ վերջ, նա մահաւանդ 1922ի աշնան շատեր եկան Հունգարիա: Այսօր մօտաւորապէս 100 հայ կը գտնուի Հունգարիոյ մայրաքաղաքը, մեծամասնութիւնը թրքահայեր, բայց կայ մի քանի Ռուսահայ ալ, որոնք իրեն գերի պատերազմի

1. Ժող. Զայր. Ապրիլ 25.
2. Բագմակայ, Փետր. 1924, էջ 54-57.
3. Ժամակարգութիւն. ապ. վեհեա. 1898. էջ. 6, 9, 11, 375, 418, 554, 635 ևն. ևն..
4. Անդ, 6, 24, 579, 587, 662, 761, 1158 ևն. ևն..
5. Յով. Ա. 18.
6. Անդ, Ա. 14.
7. Ժմկրց. էջ. 288, 506 ևն. ևն..
8. Անդ, 288, 506 ևն. ևն..
9. Անդ, 288, 674.
10. Անդ, 767.
11. Հաւատարմ. ևն...
12. Ժմկրց. էջ. 9. Ժմկրց. 424, 761, 792, 819, 989 ևն. ևն..
13. Եղիշէ եւ իր Ի զարու ևն. 29 էջ. եւ Ժող. Զայր, Ապրիլ 28.
14. Անդ, 792, 1145, 1171, 1178.
15. Անդ, 1144.
16. Անդ, 1110.